ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ-667

18 հուլիս 2011թ. քաղ. Հրազդան

ՄՆԱՑԱԿԱՆ ՍԱՅՈՒ ՄՈՎՍԵՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի „ա„ ենթակետով, հիմք ընդունելով Հրազդանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի հուլիսի 11-ի թիվ 90 որոշման 6-րդ կետը և Մնացական Մովսեսյանի 2011 թվականի մայիսի 20-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 28-րդ շենքի թիվ 23 բնակարանի բնակիչ Մնացական Սայու Մովսեսյանին կառուցապատման իրավունքով տրամադրել Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 28-րդ շենքին հարող տարածք N1 հասցեում գտնվող 20.0քմ հողամասը՝ ավտոտնակ կառուցելու նպատակով
2.Հողամասը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում:
3. 5-օրյա ժամկետում կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ